



**ԲԵՐՈՅԵԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՏԻՏԵԿԱՆ**

**ԺԱՍԱՐԻ 1897**

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 դր.:  
 Վերամանույ 6 ֆր. ոսկի — 2 դր. 50 կ.:  
 Մեկ թիւ կտրած 1 ֆր. — 50 կոպ.:

**Թիւ 9, ՍԵՊՏԵՄԲԵՐ**

**Ա Յ Մ Ա Ն Մ Վ Ե Կ Ա Ն Վ**  
**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

**ՓՈՒՅՈՍ ԲԻՋՆԵԿՈՍ ԵՒ ԻՐ ՂԵՍՄԻԹԵԱՆ ԽՐԴԱԿԱՆ**  
 (Հրատարակչի անունը)



որենացին (Գրք. Ին) պատմում է գնեկի ամուսնութիւնը փառանքեմի Հետ, Տիրիթի եւ Վարդան Մամիկոնեանի արած ամբաստանութիւնը

գնեկի դէմ, Տիրան կոյր Թագաւորի խեղճամահ անելը, Արշակի որսի ելնելը, Տիրիթի եւ իւր բարեկամ Վարդանի կրկին ամբաստանութիւնը, գնեկի սպանութիւնը Վարդանի ձեռքով, Արշակի ազգոյնի ամուսնութիւնը փառանքեմի Հետ, փառանքեմի գործած զարհուրեկի ոճիրը Ողբմպիտազայ տիկնոջ դէմ, Էսպուհ

պատերազմը Յունաց դէմ, Տիրիթի եւ Վարդանի սպանութիւնը Վասակի ձեռքով:

Համեմատելով խորհնացու այս պատմութիւնը փառաստի պատմութեան Հետ (Գր. Ժե-ժը), գտնում ենք բազմաթիւ անկայանի նմանութեանց Հետ ի միասին նաեւ բազմաթիւ հակասութիւններ: Այսպէս՝ մինչդեռ ըստ փառ-

ս ինչպէս առաջ եւս առիթ ենք անդեղ կատարել, խորհնացու ճամբարների կարգն եւ նիւթի դասարարութիւնը նպին է՝ ինչ որ փառաստի մաս: Այսպէս փառաստը կարգով պատմում է Արշակի Թագաւորութիւնն եւ արած կարգադրութիւնները (Գր. ա-բ), Ներսէս Վեժի ընտրութիւնն, սուսն եւ գործերը (Գր. գ-դ), նորս պատգամաւորին առ Յունաց կայսր եւ սքորսիին (Գր. ե): Ճիշտ այս կարգով եւ խորհնացին պատմում է Արշակի Թագաւորութիւնն եւ արած կարգադրութիւնները (Գր. ժը), Ներսէս Վեժի ընտրութիւնն եւ գործերը (Գր. ի) եւ նորս պատգամաւորին առ Յունաց կայսր (Գր. խ): Միայն թէ այս կարգը խորհնացու ճամբարներում է Գր. ժթ գլխով, որը: Ինչպէս տեսանք (Քրիստ. 195), խորհնացու կողմից մի ինքնահարկ հայացք է Արշակի Թագաւորութեան վերջը, յորհնած փառաստի պատմութեան վերջը: Ինչպէս ըստ փառաստի Ներսէսի իւր առաջին պատգամաւորութեան ժամանակ սքորսուում է, խորհնացին ընդհակառակն նորս Հայաստան է վերադարձում պատգամաւորներով (այսպիսի նպատակով, ինչպէս ըստով պիտի տեսնենք): Այս է պատմաւ. որ խորհնացին բաց է Թառնէ փառաստի Գր. գպգ. մը զուրկները, որոնց մէջ պատմում են Ներսէս Վեժի սքորսուելն եւ նորս բացահայտութեան ժամանակ Հայաստանում անդի աւելցած զեղբերը, իսկ յետոյ (Գր. եթ) պատմում է Արշակի խառնութիւնը գնեկի Հետ եւ այլն: Եւ կրկին փառաստի պատմութեան (Գր. ժե) Համաստարութիւնն եւ յեղաշրջութիւնն է, ինչպէս ըստով պիտի տեսնենք: Բարեւ խորհնացին սքորսուել պատմական կարգը խառնարկ է այն պատմաւ. որ Ներսէսի մի անգամ պատգամաւորաւորելուց որոշ անդեղեղեղով երբեան է ինչն:

տոսի այս բոլոր եղբրական պատմութեան շար-  
ժառիթը լինում է Տիրիթի եւ Արշակի տրու-  
փանքը զեպ ի գեղեցկուհին փառանձեմ, ըստ  
խորենացու գնելի կորստեան պատճառը լինում  
է իւր փարթամութիւնն եւ Տարտութիւնը, որը  
Արշակը յարշտակել է ցանկանում: « Բայց կայ-  
անք », սառւմ է խորենացին (Գ, 1ա), « բարե-  
բարութիւն արարեալ մանկանն գնելայ՝ յա-  
զագս զուր ի նոցանն մահուանն Տրդատայ Տոր  
տոս, տայ նմա զպատիւ Տիւրպատութեանն եւ  
զանձն յորով: Ընդ որ խանդացեալ Տիրիթ, խոր-  
հէր նմա ի շարիս Տանապոյն (Գ, 1ա), « քան  
դիպող աւուր: Այս օրը հասնում է, երբ  
գնելին իւր կուրացած պապը Տիրան ընծայում  
է իւր բոլոր կայսերն եւ կալուածքները, « իբր  
զինքն ունելով պատճառ սպանմանն », Տրդատի,  
գնելի Տոր, երբ գնելը փառանձեմի հետ ա-  
մուսնանալով եւ « թագաւորապէս հարսանին  
արարեալ », գրաւում է հայ նախարարների  
սրահով: Այստեղ երկու պատմագիրների մէջ  
նմանութիւններ կայտայնի են, որ եւ մեք  
յառաջ ենք բերում:

Փատոս Գ, 11:

Ապա Տիրիթ ի հարս  
նեանք Տիրան մտանք, եւ  
բազում վարձեր իւր օգ-  
նականն եւ աստարտ, որով  
զեւր յարախոսութիւնն  
յառաջ վարի կարացել է:  
Եւ իւր ստանալու գնեւել  
լին յեղեակութեամբ աւ իւր  
տարտը Արշակ զարշտակել  
թէ գնել իւր տարտը իւր  
եւ զիւր օգնականն եւ ա-  
մուսնայն մեծանեց, եւ ա-  
մուսնայն եւ ազատը իրն  
զգնել, եւ ամենայն աշ-  
խարհին նորաբար կայսին  
պտեղութիւն նորա ի վե-  
րայ իւրեանց տուել քան  
զքո: Արք, սակն, իրտն  
եւ սեն սարայ, զինք գր-  
եցանք...

Խորենացի Գ, 1բ:

(Խորենացի փոխգր-  
ածակ ընդ նա (ինն ընդ  
գնելն) եւ իրեւել, ետուն  
նա զպտեղակ իւրեանց,  
զքոս սակն, մեծապէս  
հանդերձեց զարգաւ եւ  
զինքն: Եւ իւր ստանալ  
լին նմա: Խորենացի երես  
Տիրիթ զարտաւ ստանալ  
հանդերձ արտեւան իւ-  
րով վարտանալ զնախորտ  
սարային, որ ի Մամիկանան  
ստանն էր, սակն. Այ-  
ն իրտն, զի իրեւել է գնել  
պտեղակ իւր, զի իւր  
փոխական իւր իւրտն-  
քի...)

Պարզ է որ խորենացին իւր պատմութիւնը  
գրելու ժամանակ փաւստորի պատմութիւնը  
այժի առաջ ուներ: Բայց նա այստեղ նոյն ե-  
ղբրակով է վարուում, ինչպէս շատ զեպսերում  
վարուել է, այսինքն փաւստորի պատմութեան  
մէջ ըստ իւր ճաշակի եւ տեղեկեցիկայի փոփո-  
խութիւններ է մտցնում: Օր. խորենացին Ար-  
շակի առփանքը լռութեան է մասնում, որով  
հետեւ իբրեւ ողջախոհ վանական չէ ցանկա-  
նում իւր զգաստ ընթերցողների լսելիքը տաղու-  
կացնել այսպիսի ազեղ պատմութիւններով:  
Փաւստոր գնելի թաղման հանդէսը նկարա-  
գրելու ժամանակ ստում է. « Իսկ կինն սպա-

նելոյն փառանձեմ զՏանգերանս պատուեալ,  
զգէտս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին  
կոծէր. ձայն արկանելով ճէր, յորըս արտա-  
սուաց յաղիորդմ գուժի առհասարակ զամ-  
նեանն լացուցաներ: Իսկ թագաւորն Արշակ ի  
լալին տեսանէր զկինն սպանելոյն, առփէր եւ  
ակն զնէր՝ առնուլ զնա իւր կուսութեան: Իսկ  
Տիրիթի համար սառւմ է. « Մինչդեռ ի նմին  
կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ  
չունելոյ տոփանացն: Պատգամ յղէր առ կին  
մեռելոյն. սակ՝ զի մի կարի գանձն քո աշխա-  
տանքը այդչափ, զի այր յարի եւ եմ քան զնա.  
ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մասնեցի զնա  
ի մահ, զի զքեզ առից ինձ կուսութեան », Այս  
տեսակ նկարագրութիւններ այն ժամանակուս  
ողջախոհ վանականին առ նուազն նոյնչափ անա-  
խորժ պիտի թուէին, ինչպէս Չըլայի La Terre  
կեղտոտ ուսմանը գարուս բարոյական մարդկանց:  
Այս տեսակ զգաստ ականջներ համար յի-  
րաւի տաղեկալի նկարագրութիւններով փաւ-  
ստոր հարցուս է: Տես օր. փաւստոս (Գ, 16),  
ուր հեղինակը նկարագրում է Պոպ արքայորդու  
ախտերը, կամ (Գ, 17) ուր Հայաստան եկող  
Շապուհ Ք. ի անարժան վարձուները նկարա-  
գրուած է: Աճա՞ փաւստոս այս տեղիւն են,  
որոնցից տաղեկացած մի ուրիշ ողջախոհ վանա-  
կան, տարակուսանօք բացատրանում է. « Արդ  
յայտպիտանն քաղաքի եւ ի մէջ այնչափ բազ-  
մութեանն ուսելոյ վարժեալ այրս փաւստոս,  
այնպիսի ինչ պարտօք անհաճոյս լսողաց բանս  
կարգէր ի պատմութեան իւրում. քուս եւ մի  
լինի: »<sup>1</sup>

Իսկ խորենացու նկարագրութեան մի քանի  
տեղերը ակնյայտի կերպով ապացուցանում են  
նորա կեղծիքը: Օր. սուտ է, թէ « Տիրան ող-  
բացեալ դառնապէս զՏրդատ զորդի իւր, զՏարթ  
գնելայ, իբր զինքն ունելով պատճառ սպանման  
նորա, (որովհետեւ Յուլիանոսի առաջ իլնելով,  
պատանդ էր տուել Տրդատին, տես յօր. Գ,  
17), որովհետեւ ինչպէս տեսանք (վերն Գ,  
84—85), Տիրանն ո՛չ ժամանակակից է եղել  
Յուլիանոսին եւ ո՛չ էլ երեւակայական Տրդատին  
պատանդ է տուել: Նոյնպէս խորենացին փաւ-  
ստոսից (Գ, ա) գիտէր, որ Տիրան կուրացրած  
թագաւորն Արշակի թագաւորութեան ժամա-  
նակ այրում էր, բայց թէ է՛նչ մահով նա մե-  
ռաւ, այդ նա փաւստոսի մտ չէր գտել: Եւ  
ահա խորենացին ցանկանալով փաւստոսի պատ-

1 Ղալար փարպեցի, Ա, 7:

մութիւնը լրացնել, Տնարում է Տիրանի խեղ-  
դամահ լինելն Արշակի Տրամանով, ի Տարիէ  
ցանկանալով վերջինի Տայրասպան Տանդիս-  
ցնել: Իսկ Տիրանին յատկապէս խեղդամահ է  
անել տալին, որովհետեւ Փաւստոսի պատմու-  
թիւնից (Գ, ԺԴ) գիտեր, որ Տիրանն ինքն Դա-  
նիէլ ատորուն խեղդամահ անել էր առել, ցոյց  
տալու Տամար, որ « զփոխարենն Դանիէլի առն  
Աստուծոյ Տատոյց. որով չափով չափեաց՝ չա-  
փեալ եղև ըստ Գրոց: »<sup>1</sup>

Խորենացին զարմանալի փոփոխութեան է  
ենթարկում նաեւ Վարդան Մամիկոնեանի խա-  
ղացած գերն այս եղբրական պատմութեան մէջ:  
Ըստ Փաւստոսի՝ սա Վասակ սպարապետի ան-  
գրանիկ եղբայրն եւ իւր տոճմի նա Տասպեան կամ  
ամուռուտին էր, որն Արշակի Տրամանով Գնե-  
լին նենգութեամբ չայոց բանակն է Տրաւիրում,  
որով եւ լինում է պատճառ նորա մահուան:  
Նշոյալէս Փաւստոս (Գ, ԺԸ) պատմում է Վար-  
դանի մահը բոլորովին այլ կերպով: Փաւստոսի  
մտ Վարդան եւ Վասակ եղբայրները ներկայա-  
նում են իրար եւ գաղափարական Տակառակորդ-  
ներ: Մինչդեռ Վարդանը միանգամայն Տակա-  
ռակ է Տոռմեական գաշտակցութեան եւ ամեն  
Տնարը գործ է դնում, Արշակին կայսեր դաշ-  
տակցութիւնից Տեռացնելու եւ Տապուհի Տեռ  
կայսերու, Վասակն ընդՏակառակն ամեն միջոց  
գործ է դնում Արշակին Տամոզելու, որ նա  
չՏաւառայ Տապուհի պատիր խառուանքի եւ  
ամենեւին չենթարիտի նորա ազդեցութեանը:  
Գաղափարների այս տեսակ սարբերութիւնից  
յառաջանում է երկու եղբայրների դերերի  
թշմամութիւնը միմեանց դէմ, որի Տեռեւանքն  
եւ լինում է Վարդանի սպանութիւնը Վասակի  
ձեռքով: Բոլորովին այլ կերպով է պատմում  
Խորենացին այս բոլորը: Ըստ Խորենացու՝ Վա-  
սակը թշնամացած է Վարդանի Տեռ ոչ թէ գա-  
ղափարի Տամար, այլ « վասն աղէկան միող  
Տարճի, վասն որոյ նախատեսաց զնառա արքայ  
բանիւք կսկծեցուցանողը », մի կեղծիք, որ մեր  
ձեռուռու անուանը յաւիտենական նախատիրք  
է բերում: Նշոյալէս Խորենացին Վասակին չէ  
անուանում սպարապետ եւ Վարդանին չէ ա-  
նուանում նա Տասպեան կամ ամուռուտեր, այլ եր-  
կուսին է լոկ շնուկները Արշակ թագաւորի, եւ  
այս շատ Տականալի է Մամիկոնեան ասն  
թշնամի պատմագրի կողմից: Մինչդեռ ըստ Փ. Ի  
Տիրիմն առանձին է սպանուում » (Չայոց զո-

բազնդից, Բասնի անտառներում), իսկ Վար-  
դանը՝ առանձին (Վասակի ձեռքով, Տայոց աշ-  
խարհում), Խորենացին կարճ կարճով, այս եր-  
կու բարեկամներին էլ միասին է գերեզման ու-  
ղարկում: Սոցա՝ գաղափարով եւս միմեանց Տեռ  
բարեկամացուում է, Վարդանի խաղացած քա-  
ղաքական դերը մասամբ յանձնելով Տիրիմնի  
Տապուհը, ասում է Խորենացին, « յայտնեաց  
զցատումն՝ զոր ունէր առ Արշակ, վասն ոչ նմա՝  
այլ կայսեր Տարիկեց զայնքան ամա: Վասն որոյ  
առաքե առ նա Արշակ զՏիրիմն եւ զնորուն սի-  
րեցեալն Վարդան արժանի պատարագօք, խըն-  
դրել զՏաւառութիւն, եւ այլն: Այս բոլորը Փաւս-  
տոսի պատմութեան (Գ, ԺԴ) յեղաշրջումն է:  
Այդ ժամանակները, ինչպէս արդէն նկատած  
ենք, չայոցը Տարկաւառ չէին ոչ Հռոմայեցիներն-  
րին եւ ոչ էլ Պարսիկներին:

Թողնենք սոս Տիրիմն եւ Վարդան բա-  
րեկամներին եւ վերագառնանք Գնեւի սպա-  
նութեան պատմութեանը: Նախ պէտք է նկա-  
տել ուղանուն րեք նշնաթղնն երկու պատմա-  
գիրների մէջ: Ըստ Փաւստոսի՝ Գնեւը սպանուե-  
ցաւ Շահապէլուս, ուր գտնուում էր Արշակ  
թագաւորն եւ Չայոց զորաբանակը: Խորենացին  
mutatis mutandis Տամանշայնում է Փաւստոսի  
Տեռ: Նախ նա Գնեւին բնակուել է առ լիս Ա-  
րշակի Բաստոսի, ապա Շահապէլու լեռան՝ վե-  
րայ նեռաՏար անել տալով, թաղել է առ լիս  
Արշակի գաշտում, արքունական Զարնաթ Իւր-  
տում: Արդ որովհետեւ ըստ Փաւստոսի (Գ, ԾԵ)  
Զարնաթ Իւր Իւրու գտնուում էր « ի Բաստոսի  
յԱրշակի, զորս Տամար կասում չէ կարող  
լինել, որ Մովսէսը Գնեւին սպանուել եւ թա-  
ղուել է առ լիս նոյն անըն, աբ եւ Փաւստոս: Իսկ  
Արշակի որս երկնին Խորենացին կարկուտ է  
Փաւստոսի պատմութեան վերայ (Գ, Ի), որ տեղ  
պատմած է Տիրան թագաւորի որսի երկնին  
« յերկրին Ապաղանեաց, յորմն մեք լերին Մա-  
տեց... տեղոյն՝ որում անուռ կոչի քաղաք Ա-

մահուան մահն բառացի նմանութիւն ունի Փ. Ի պատ-  
մութեան Տեռ (որ միայն Տիրիմն մահուան մասին է):

Փաստաւ: Խորենացի:  
« Տայր հրաման թագաւորն « Արշակ հրամայի նոյն Վա-  
սակի ապագոսեան բանառ ասցալ զնոր նոցա իրել բազ-  
կին զնոր լիւն Տիրիմնայ. մահուան իրորս, զի սաբ Ի. Ի.  
ի իրէս հոռոյն նմա, ան հոռոյն ուղանցի, զէն ի  
մեղաքու սպանելն: »

1 Արդեօք Շահապէլուն միայն լեռան էր անուա-  
նուում, թէ՛ այդ անուանով որ եւ է առանձին գրաստ-  
կեան եւս կարծ է, ինում է անորոշ: Չայր Արշակ, իւր  
« Տեղաբարութիւն Չայոց Մեծաց » 85 նշոյալէս միայն Շա-  
հապէլուն լեռան է յիշում:

1 Մասլոճեան, Ե, 2:  
2 Խորենացու պատմանը Տիրիմնի եւ Վարդանի

վերո, (այսպէս էլ Արշակը որսի է ելնում « շինարար Մոսէոս աննէ որսս յիրում սիրեցեալ գաւառին ի Ղոգայտօրն »): Ըստ փաւստոսի (եւ ըստ Ճմարտութեան) Գնելը սպանուեցաւ ոչ թէ որսի ժամանակ, այլ Արշակի Տրամանով Ղաւասարդի տունին (որ սուրբ Յովհաննէս Մկրտչի տունին էր փոխարինուած), Լայոց զօրբանակի հանդէպ Շահապիվանում գլխատուեցաւ, ջնայելով, որ Ներսէս Մեծը փառանձեմի աղիորդով ողբէր յուզուած՝ խափանեց սուրբ պաշտօնը, շտապեց Արշակ թագաւորի խորանն եւ իւր մտքի ամողջ կարողութեամբ աշխատեց Արշակ թագաւորին համոզելու, որ Գնելի անիրաւ գլխատման Տրամանը յետ անէ: Արշակը, զահաւատած փառանձեմի՝ Գնելի կնոջ սիրով, չյարգեց Տայրապետի միջնորդութիւնը եւ Գնելը գլխատուեցաւ, որից յետոյ եւ Արշակը ամուսնացաւ նորա կնոջ հետ: Խորենացին, որպէս զի ստիպուած չլինի Տայրապետի պաշտօն խափանելն եւ ապարդիւն միջնորդութիւնը յիշելու, Գնելին սպանել է ասիկն որսի ժամանակ: Ներսէս Մեծը միայն ուշ, բոլորից յետոյ է իմանում Գնելի մահը եւ նզովում է Արշակին: Պէտք է նկատել եւ ան, որ ինչպէս փաւստոսը, այնպէս էլ խորենացին Գնելի մահի անմիջապէս յետոյ պատմում է՝ 1. Արշակի ամուսնութիւնը փառանձեմի հետ, 2. Պապի ծնունդը, 3. Մըքընիւնի երիցի անլուր օճիրը, եւ այս եւս նշան է, որ նա իւր պատմութիւնը գրելու ժամանակ Թի պատմութիւնը աչքի առաջ ունէր: Միայն խորենացին անպաղ լեքրպով ստաստում է, Ռղեմիտիադային Արշակի առջև կինը համարելով: Ըստ փաւստոսի Արշակը փառանձեմի յափշտակութիւնից յետոյ միայն, « իբրեւ կինն (փառանձեմ)՝ ի նա ոչ յանգոյց զլիսս իւր », ամուսնացաւ Ռղեմիտիայի հետ: Եւ իբրև, եթէ Ռղեմիտիադային (որի ամուսնութիւնը Արշակի հետ եղաւ 360 թուին), համարելը Արշակի առաջին կինը, այն ժամանակ փառանձեմի՝ Պապի մօր ամուսնութիւնը Արշակի հետ պէտք է եղած համարենք 360 թուից յետոյ, եւ այդ ժամանակ ժամանակագրական մեծ անտեղութիւն դուրս կու գայ, որովհետեւ Պապը սպանուեցաւ 374 թուին, երկու մանուկ որդի թողնելով: Իսկ որ խորենացին Ներսէս Մեծի թողնելու հետանալն եւ ստրկամիտ Չուսնկի կաթողիկոսութիւնն աւանդելն չէ յիշում, այդ եւս շատ հասկանալի է խորենացու նման եկեղեցականի կողմից, որն ամէն հնաւը գործ է դնում՝ Տայրապետական աթոռի վեհութիւնն եւ զօրութիւնը ցոյց տալու համար:

Խոր. (Գ, իլ) պատմում է Շապուհի արդիւն արշաւանքը Տիգրանակերտի վերայ, այս քաղաքի պաշարումն, Մծբին յետ նահանջին եւ սպանական թուղթը Տիգրանակերտցիներին, իսկ իր, գլխում խորենացին պատմում է նոյն քաղաքի՝ առումն եւ քնաբարձ քանդումն:

Արդ որովհետեւ այս եւ հետեւեալ գրուելների մասին Շապուհի պատերազմների խօսք կայ, մենք անհրաժեշտ ենք համարում՝ նախ մի քանի խօսք անել Պարսից եւ Հռոմեացուց մէջ տեղի ունեցած պատերազմների մասին, որով եւ մենք մեր տուած խոստումը (վերն եր, 143) կատարած կը լինինք: Խոր. (Գ, Ժբ, որի վերնագիրն է. « Պատերազմ Շապհոյ ընդ կոստանդեպն ») պատմում է. (Շապուհ Ռոմացեան) « յարձակեցաւ ի մէջերկրայս եւ ի Պարսիսնէ: Իսկ կոստանդեպ արարեալ կեսար զՅուլիանոսս, սպառազինեցաւ ընդդէմ Պարսից, եւ տուեալ ճակատ, երկրին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յուրաքանչիւրոցն. եւ ոչ մի ի միւսը թիկունս դարձոյց, մինչեւ ի հաւանութիւն եկեալ, արարին խաղաղութիւն ամս սակաւս: Եւ ի Պարսից դարձեալ կոստանդեպ, յերկար հիւանդացեալ վախճանեցաւ ի Մովսիսեմիսի քաղաքին վիւղիստոսով, թաղաւորեալ ամս քսան եւ երես: Արդ արտաքին պատմագիրներից գիտենք, որ Շապուհի եւ կոստանդիոսի մէջ ծագած պատերազմը ընդհատուածն որով տեւեց սորա կայսրութեան առաջին տարւոյ մինչեւ վերջին տարին (338—361): Արդ ով որ այս երկարամեայ պատերազմի պատմութիւնը գիտէ,՝ նորա համար պարզ կը լինի խորենացու տուած վերոյիշեալ տեղեկութեանց արժէքը, որ ոչինչ է: Մեր ծերունի պատմագիրն արտաքին պատմագրութեանց գիտէր, որ կոստանդիոսի եւ Շապուհի մէջ պատերազմներ են տեղի ունեցել, բայց այն պատերազմի պատմութիւնը ուսումնասիրած չլինելով, նորան լոկ մի երկու իջուներ է նուիրում, այլեւս չասելով, թէ երբ, ինչ տեղ Հռոմայեցի եւ Պարսիկացի ընդհարումներ ունեցան, ով որ տեղ յայտնեց կամ յայտնուեց: Խորենացու տուած տեղեկութիւնները Յուլիանոսի եւ Յովհաննէսների ժամանակի մասին (361—363) արդէն բոլորովին սուս եւ հակապատմական առասպելներ են, որոնց մասին արդէն խօսել ենք (վերն եր, 84):

1 Յն Գաթիկոսն, Տիգրանական պատմ. Բ, 490—498 եւ Նեոլեգէ, պատմութիւն Ասասեան, (Թարգմ. Մարտատում, 1896, սկսւմ էր. 332—33):

Նոյնպէս աններելի յանցանք է խորենացու կողմից, որ նա 363 թուին կռած կրանաց դաշինքի մասին աննեւեին տեղեկութիւն չունի: Մինչդեռ այդ օրից սկսուեցան Շապուհի յորակուածները Հայաստանի վերայ, որոնք եւ տեւեցին մինչեւ Պապի թագաւորութիւնը (363—369), իսկ Հռոմէացոց եւ Պարսից մէջ մինչեւ 371 թուականը ընդհակառակն խաղաղութիւն էր տիրում, ՚ խորենացին բոլորովին անծանօթ լինելով այդ ժամանակների պատմութեան կարծում է, թէ 363 թուից յետոյ եւս Պարսից եւ Հռոմէացոց մէջ անընդհատ պատերազմները շարունակուում են: Արդէն մեք խօսել ենք այն հետեւեցների մասին, որ խոր. (Գ, Ժը եւ ԺԺ) ազիրապար շարագրում է հռոմէական պարսկական պատերազմի մասին, (տես վերն եր. 195) (Գ, ին) պատմում է, որ «քննախնդիր անցելոցն մարտից կամեցեալ լինել Շապուհ, ինքն էլանէ պատերազմել ընդ Յոյսն, որոյ աղագաւ ինդրէ Վըշակ մար թագաւոր Տանգերձ ամենայն զօրք շայր ընդ իւր լինել: Իսկ Վըշակ ոչ կամեցաւ իւրովի երթալ, այլ բարուրս եղեալ, դոյնէ գունդ առաքէ զկնի Շապհոյ, այլ եւս չատելով, թէ ինչ եղաւ Շապուհի այս արշաւանքի հետեւանքը: Այսքանն միայն նա ստում է, որ Շապուհ իւր այս արշաւանքի ժամանակ (Գ, իդ) եւ այս արշաւանքի վերադառնալէս (Գ, իը) Տանգիպում է Տիգրանակերտին: Սակայն խորենացու այս պատմութիւնն եւս սուտ է: Ամփնանսից եւ Փաստասից հաստատուպէս յայտնի է, որ Վըշակը կորանաց գաշինքից մինչեւ իւր անձնատուր լինելը (363—368) Շապուհի հետ անընդհատ պատերազմների մէջ է եղել, եւ նորան երբեք օգնական զօրք չէ սուել Յունաց կայսեր դէմ: խորենացին (Փաստասի պատմութեան վերայ, Գ, ի) հնարում է այս անմիտ արշաւանքը, որպէս զի յետոյ (Գ, իԺ) բաց ի Շապուհից եւ հայ նախարարներից՝ Վաղէսին եւս թշնամի հանդիսացնէ Վըշակին, վերջին եւ անելանելի գրութեան մէջ դնէ, որպէս զի Ներսէս Մեծ հայրապետը նորան կորուստից ազատող հանդիսանայ:

1 Արդէն մեք տեսաք (վեր եր. ձե. 1), որ 368 թուին Վաղէս կայսր մեծ զգուշութեամբ օգնեց Հայերին, որպէս զի Յովնանոսի կռած գաշինքն իտիտառ Հանդիսանոց: Դորովից յետոյ Ամփնանսը (XXVII, 12) պատմում է, որ Շապուհը լռելով Հռոմէացոց ջարդերն հասցած օգնութիւնը, ինչպէս եւ նոցա միջմտութիւնը Վրաց թագաւորութեան դարձեալ: Լափաղանց ջրբացում է, որ 369 թուին մեծ պարսաստութիւններ եր տեսնում Հռոմէացոց վրայ յարձակուելու, որ եւ որսւ. 871 թուին: (Ամփնանս XXIX, 1.)

Բայց նախ քան խորենացու սուտած տեղեկութիւնները հռոմէական պարսկական պատերազմների մասին սպասելը, հարկ է, որ խորենացու վերոյիշեալ (իդ եւ իը) գրութեան որ մասին խօսիքը, որոնք մէջ, ինչպէս ասացիքը, նա պատմում է Տիգրանակերտի առնելն եւ կործանելն:

Արդէն մեզից առաջ թէ ազգային եւ թէ օտարազգի գիտունք զարմանալով ցոյց են առել մեր պատմաբանի կեղծիքն եւ խարդախութիւնը, որոնք եածկուած են այս գրութեան մէջ: խորենացին Փաստասի պատմութիւնից գիտենալով Տիգրանակերտի աւերումը Պարսիկների ձեռքով (տես քիչ ներքեւ), այստեղ ուղղակի բռնաջէնեղով արտագրում է կեղծ կախիմենտի առասպելախառն պատմութիւնը Տիգրանի եւ թերեի կործանման մասին Աղէքսանդր Մակեդոնացու ձեռքով, անելով հետեւեալ փոփոխութիւնները միայն. այստեղ ուր կախիմենտը գրում է Տիգրան եւ թեթէ, խոր. գրում է Տեղեւոյնեղ, ուր Տեղեւոյնեղ եւ թեթեւոյնեղ՝ Տեղեւոյնեղոյն, ուր Ափսոսոյրը, խոր. գրում է Լոգոսն, ուր Միթրոսոյնեղ՝ Պարսիկներ, ուր Գու՝ Մթին: Այս նամակը, որ Շապուհը գրում է Տիգրանակերտին, բռնաջէնեղ օրինակութիւն է այն նամակի, որ Աղէքսանդրը գրում է Տիգրանին: Մինչեւ անգամ Տիգրանակերտի պաշարման ժամանակ անդի ունենացած զեպքերը, ձայնարկութիւններն, առման ժամանակ գործ գրուած մքերանները նոյնն են, որոնք ըստ կեղծ կախիմենտի գործարկուեցան թերեի տամն ժամանակ:

Գալով այն հարցին, թէ սրտեղից գիտեր խորենացին Տիգրանակերտի աւերման պատմութիւնը, գորոս մասին պէտք է պատմել հետեւեալը: Նախ եւ առաջ պէտք է գիտենալ, որ ազգային պատմութեան մէջ երկու Տիգրանակերտ է յիշուում: Գոցանից առաջինը, որն եւ կոչուում է Ամիր (կամ Գիւրաբանի) այսօր եւս կանգուն է եւ գանուում է Տիգրէս գետի ափին, Կոփաց աշխարհում: Բոլորովին ուրիշ քաղաք է յոյն եւ լատին պատմագիրներից բազմիցս յիշուած Տիգրանակերտը, որ հիմնց Տիգրան Մեծը Հայաստանի եւ Միջագետքի սահմանում, Մեծնից մտա երկու օրուայ ձանապարհ գէպի արեւմուտք, նման Ղինուէին եւ Բաբելոնին, շրջապատուած 50 կանգուն բարձրութեամբ պարիսպներով, զարդարուած շքեղ սպարաւոր-

1 ՅՏ «Հանգեա Ամարտեայ», 1891, Ապրիլ, եր. 108:

ներով եւ պարտեզներով: Ղուկուղտ 69 թուականին, Հոկոս. 6ին յաղթելով Տիգրանին, կործանեց նաեւ նորա հիմնած քաղաքը: Այնպէս նաչպէս վերեւ նկարագրուեցաւ, այս Տիգրանի գրքերի դիրքն որոշում է Զրախուտ, որն նաեւ այն հողերը գտնուել եւ աչքով ամեն հանգամանքներ տեսել եւ կշռել է (իւր "Ueber die Lage von Tigranokerta", Abh. der Berliner Akademie 1880 շարագումութեան մէջ) որի հետ համաձայնուում են Մոմիզէն (Römische Geschichte III. 68, Anm.) եւ Նիպերը:

Արդ փաւստոս Բիւզանդացին (Գ, իր պատմում է, պարսկահայկական պատերազմի (363—368) առաջին ժամանակները Շապուհը Մեհրուտան գաւառման ստանդորում թեանքի արշաւելով Հայաստան, աւերում է նաեւ Տիգրանակերտը: Աճա՛ փաւստոսի խօսքերը. "Ապա զորածորով լինէր թագաւորն Պարսից Շապուհ, եւ լրտես արձակէր, դիտել զարբայն Հայոց զԱրշակ: Եւ մինչ նա դեռ գզուշացեալ Արշակ արբայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն ՂԱտրպատական սահմանօքն, զի սնդ սպատէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կայեալ զՄերուտանն ընդ այլ կաթիլ ստպատակ յաշխարհն Հայոց ատնէին: Ձի ընդ Աղձնիս եւ ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն եւ ընդ գաւառն Անձուայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մըուր գաւառն եւ ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեցաց, զհողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ստպատակեալ հեղեալ ծաւալէր բազմութեամբ իրրեւ զլուր բազում...: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառն Աղձնեաց յիշխանութեան բոզնիկն. քառասուն հազարերդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին... 11ր այստեղ յիշուած Տիգրանակերտն Ամիր կամ Դիարեկիկըն է, դորա մասին փաւստոսի ընդարձակ նկարագրութիւնը ոչ մի կապակծ չէ թողնում: Աճա՛ փաւստոսի այս պարզ եւ ստոյգ

պատմութիւնն է, որ խորհնացին կեղծ կալեալ թեանքի առասպելներով այլանգակել է: Խորհնացին այսպէս վարուելով, միեւնոյն ժամանակ զանց է աճուում յիշելու այն փայլուն յաղթութիւնը, որ Վասակ սպարապետը, Մամիկոնեան տան հերոսը, կանգնեց Շապուհի զօրքի վերայ, ինչպէս փաւստոսն իւր վերոյիշեալ գլխում պատմում է:

Նկատենք, որ ըստ փաւստոսի՝ Պարսիկները նոյն արշաւանքի ժամանակ կողոպտում եւ աւերում են Անի բերդն եւս: "Բայց միայն մասնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ... ելանէին ի վեր եւ կործանէին զպարսպս նորա եւ ի իւրացանէին անթիւ գանձն ի բերդէն: Եւ բանակն զգեւրեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարսնց քաղաց զարշակունոյ, եւ խաղացուցանէին ի գերութիւն զուկերս թագաւորացն...: Ձի աւսէին ըստ իրեանց հեթանոսութեանն ըստ օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանինք զուկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն եւ բախտքն եւ քաջութիւն աշխարհս աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեացն: Ապա թեմիքը Վասակ... եւ զուկերս թագաւորացն Հայոց, զըրս... հանեալ թաշխարհն յամուր ի գիւղն՝ որ Աղձնն անուանին, ԱՍտրապա գաւառին, որ կայն ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն աւնուանեն, խորհնացին, ցանկանալով փաւստոսից ստարբերուիլ, այս դէպքը Տիգրանակերտի աւերումից քիչ առաջ է պատմում (Գ, իէ), ասելով, "Սպարապետն Պարսից եկեալ ի Հայս, ի ձեռնտու լինելոյ նախարարացն (Փ. ի) մտն ձեռնտու լինող միայն Մեհրուտանն է)՝ ասուտ զառաջ Անի, եւ Եկեղեցաց մեծն այբունքն որ ի նմա, այլ եւ զօրքն ի թախտուցն. ոչ գիտեմ թէ վասն նախապի նաւնելոյ Արշակայ, եւ թէ վասն հոյճոյ իւր հիթնոսակոնոց: Ձր պպա մաշութեալ նախարարացն, իսթիւ իսթիւն յաւանին ԱՂձն, որ յօրի Արագածն կոչեալ լիբնիս: Մեր ստախոս պատմագիրը նախանձեղով Մամիկոնեան տան հերոսի փառքին եւ նորա յաղթութիւնը անբարեխղճութեամբ լուծեցան տալով, հայ նախարարներին է արեւելեան տայիս թագաւորների ոսկրները: Նայնպէս նա ի զուր եւ կեղծաւորութեամբ չգիտնանալով թագաւորների ոսկր-

1 Այս բոլորից յետոյ մարզ առանց ստրակուսանաց չէ կողոպտում կարգը Ամիանոսի ընդարձակ պատմութիւնը (XIX, 1), ուր նկարագրուում է Ամիրի (Amida) առաւել, աւերումն եւ բնակիչների դերութիւնը Շապուհի ձեռքով: 850 թուականին: 2. Գոթթեմեանը (Տիգրանական պատմ. Ի. 491) այս աւերումն նորապէսում է հայ պատմագիրները պատմած աւերման հետ, միասնաբար այն ժամանակագրական անտեղութիւնը, որ այս դէպքում գուրս է զայն, որովհետեւ հայ պատմագիրների պատմած Տիգրանակերտի աւերումն եղել է ոչ առաջ քան 364 թուականը, հասանաբար 365 թուականին: Արդ այստասակ դեպքում՝ միայն մեծն է ենթադրելու, որ Տիգրանակերտը կամ

Ամիրը երկու սոցա՛ աւերուել է Պարսիկներից, 859 եւ 365 թուին:

ները գերելու պատճառը, քանի որ այդ փաւստոսի պատմութիւնից շատ լաւ գիտեր:

Արպէս զի խոր. (Գ, իշ — իը) մասին մեր խօսքը վերադարձ լինիլը, պէտք է քննենք նաեւ Արշակունի Տրիմարկութեան եւ կործանման պատմութիւնը, որ մեզ խորենացին տալիս է (Գ, իէ): Խորենացու այս պատմութիւնը փաւստոսի պատմութեան (Գ, Ժբ) համառոտութիւնը կարելի է համարել: Բայց եւ այնպէս՝ երկու պատմագիրների մէջ հիմնական տարբերութիւններ կան: Այսպէս՝ մինչդեռ ըստ փաւստոսի Արշակն Արշակունքը հիմնեց Ներսիսի բացակայութեան ժամանակ (երբ նա արտաքին մէջ էր), խաղաղութեան ժամանակ, գնելի մահից առաջ, ըստ խորենացու Արշակունիքը հիմնուել է գնելի մահից յետոյ, պարսկահայկական պատերազմի ժամանակ, երբ Ներսէսն իւր առաջին (ըստ խորենացու) պատգամաւորութիւնից վերադարձած շտյաստանում էր գտնուում: Բայց մի թէ կարելի է ենթադրել, որ Արշակը 364 — 368 թ. միջոց ունէր Արշակունի Տրիմարկութեան վրէժնէր եւ շտյաստանէր: Մեր կարծիքով փաւստոսի պատմութիւնը միակ բնական եւ ուղիղն է: Խորենացին փաւստոսին հակասում է նշոյնէս եւ Արշակունիքի կործանումը պատմելու մէջ: Մինչդեռ ըստ փաւստոսի՝ Արշակունիքի աւերման եւ ամայանալու պատճառը չարակեղ կռուած ժամանակաշրջանն էր, որի ծագելը մի այնպիսի աղտոտ եւ անպակասում սրիկաների բռնում, որպիսին էր Արշակունիքը, շատ բնական էր, (բայց որը պատմագիրը պարզամտութեամբ վերագրում է Ներսէս Մեծի արդար զայրոյթին եւ անէճքին): Ըստ խորենացու՝ Արշակունիքի աւերողներն էին հայ նախարարները, որոնք բողոքում են առ Շապուհ. սա նոցա խնդրանք՝ « Դ գառնալն ի Յունաց, իւր սպարապետներից մէկին շտյաստան է ուղարկում, որից Արշակը « խոյս ետ գիղղամբք կաւկասու, Վրաց միաբանելով, իսկ հայ նախարարները համարձակութիւն անենով, » զի մեջին ի վերայ արքունական ձեռնակերտին Արշակունիքը, եւ հարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին, բայց ի տղայոց սանդիւցաց: » Արդ որովհետեւ, ինչպէս տեսանք (վերել եր. 260), Շապուհի արշաւանքը Յունաց վերայ հակապատմական անմտ ճեղքով է, պարզ է, թէ ինչ նշանակութիւն կարելի է տալ խորենացու այս պատմութեանը: փաւստոսը պատ-

մեղով Արշակունի շտյաստան առաջ եկած աղետները, առում է. « Զէ թէպէս եւ կարի յոյժ բազմացուտ աղաքանին, դատ չկայր, եւ իրաւունք ումէք յարեւնուտս ոչ ելանէին: Վասն այսորիկ ամենայն մարդ հասաւելով վայէին... առհասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, եւ վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր եւ կորուսեալ էին, »- եւ էր ընտոյտ ինչպէս գրուած: » Ահա փաւստոսի այս խօսքերի վերայ է կարեւորաւ խորենացին նախարարների առ Շապուհ բարձած բողոքը:

Խոր. (Գ, իթ) պատմում է Արշակի պատերազմն իւր նախարարների հետ, Վաղէս կոչուելու շտյաստան գործ ուղարկելը, Արշակ թագաւորի յուսահատական դրութիւնը, Ներսէս հայրապետի բարեխաղով միջամտութիւնը թագաւորութեան գործերում, Ներսէս Մեծի Պապի հետ միասին Բիւզանդիոն գնալն եւ աքսորուիլն: Քննենք այս բողոքը այն ամէնի հիման վերայ, ինչ որ մեզ յայտն է արտաքին եւ առհասարակ վարչականութիւնից իրբեւ ստոյգ եւ անկասկածելի: « Հիւանդացեալ Վաղէստիանոս, առում է խորենացին, « Ի բերդին » որ կոչի Բերդիտիոն, վճարի ի կենցաղայն, երբքն փոխանորդելով զտերութիւնն: Յետ բարեբախտագոյն Վաղէսի պատերազմու. Գ-թացն յաղթութեամբ դարձի, » եւ այն հետոցն առաքեալ զօրս ի Միջագետս եւ ի շտյաստանս առեւելոյ զօրուն յօգնականութիւն Շապուհ: » Որքան ազէտ է մեր ծերունի պատմագիրն այն ժամանակուայ պատմութեան մէջ: Վաղէսն իւր եղբայր Վաղէստիանոսի մահից յետոյ (Գ 375) Արշակին պատմելու համար (որը 368 թուականին արդէն Շապուհին անձնատուք էր եղել եւ Անյուշ բերդում շղթայած տառապում էր), շտյաստան գործ է ուղարկում Թեոփոս զօրավարի հրամանատարութեան ներքոյ, որը մինչեւ 379 թուականը Արեւելքում գտնուած չէ:

Արդ, ինչպէս վերել եւս ասացինք, խորենացին այս կերպով է նկարագրում է, որպէս զի Արշակ թագաւորին անեւանելի, յուսահատական դրութեան մէջ ձգէ, եւ յետոյ Ներսէս Մեծ հայրապետին եւ իւր միջամտութեամբ եւ բարեխաղութեամբ նորան ազատել տայ: Հէնց այս նպատակի համար խորենացին Արշակի պատերազմն իւր նախարարների հետ, որ շատ առաւ էր եղել (փաւստոս, Գ, Ժթ), այստեղ է

1 Մեծն պատեղ խորենացին բառացի ընդ որքան կէլ է Մաղաթտի անվուր պատմութիւնը (« Հանգեւ Ան, 1894, փետ. եր. 80 »)

յիշում, եւ այսպիսով Արշակին ամէն կողմից թշնամիներէջ շրջապատուել տալով, շարունակում է. «Ապա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա շապուհ եւ ձաղէս եւ իւր նախարարքն, սարակուսեալ յամենեցունց յղէ բազում անգամ աղաչելով զՄեծն Ներսէս, խոսանալոյր զսունայ յամենայն ճանապարհաց շարաց, եւ լինել ըստ կամաց նորա, եւ ապաշխարել ի բարձր թէ ի մոխիր, միայն զի նա եկեացէ, եւ արասցէ խաղաղութիւն, եւ թափեացէ զնա ի ձեռաց Տորոսացն Յունացոյ»:

Ո՛վ կարող է չՆնազանդուիլ Ներսէս Մեծն հայրապետի հայրական իրաններին: Նա իսկոյն Արշակին եւ իւր նախարարներին հաշտեցնում է միմեանց հետ, «բայց ի նահապետէն Արծրունեաց Մերուսեանց եւ ի նորին քեռանէն Վահանայ մամիկաննէն», ստում է խորենացին, «որք անչտղ եղեալ՝ ապատմբեալ զնացին ստա Շապուհ: Սասայն այս վերջին տեղեկութիւնք խորենացին վերցրել է Փաւստոսի պատմութիւնք (Դպր. Գ., գլ. ԻԿ եւ ճ), Վահանէն, որ Մեհարուստի քեռին էր, նորա քեռայրը դարձնելով: Ահա այս երկու մտաբերչունքն են միայն, որոնք յանդգնում են Ներսէս Մեծն հայրապետի միջնորդութիւնը շարագել: «Բայց եւ սա զօրն Յունաց երթեալ մեծին Ներսիսի, շարունակում է խորենացին, «աղաչէր մի ինչ աշխարհիս մեղանել, այլ առուլ զՏարկնս եւ զորդի Արշակայ զՊագ հանդերձ ամենայն նախարարացն որդուքը պատանդս: եւ զսունայ: Որում լըող եղեալ քաղցր եւ մեծն թեոդոս զօրավարն, զսունայ առ կայսրն հանդերձ պատանդոցն, ընդ իւր ասնելով զմեծն Ներսէս թղթով Արշակայ եւ այն: Որ այս բոլորը սուտ, հակապատմական եւ անկարելի բանք են, դորս մասին ոչ որ չէ կտակածում, բայց գլխաւորն այն է, որ սորանով ընթերցողի համար պարզուում է, թէ ինչ պատճառաւ Ներսէսը խորենացու պատմութեան մէջ ժամանակակից է գուրս եկել թեոդոսին: խորենացին դիտամբ ՆերսէսՄեծն հայրապետին ժամանակակից է գուրս բերում թեոդոս մեծ քրիստոնեայ զօրավարին, որպէս զի Ներսէսը հայրաբար նորան օրհնէ, իսկ նա որդիաբար նորան հնազանդուի, Ներսէսը նորա առաջ բարեխօսի, նորան կարեւոր բաների համար խնդրէ, իսկ թեոդոսը որդիաբար նորան լսէ եւ նորա խնդիրը կատարէ առանց այլեւայլութեան: Եւ իբրև, թեոդոս զօրավարը, նույնիմոյ որ իւր կայսրը հրամանով զօքջով Հայաստան է եկել Արշակին պատժե-

լու, այնքան յարգում է Ներսիսին, որ ինքնագլուխ, նոյն իսկ առանց իւր ինքնակալի կամքը հարցնելու, սեպհական պատասխանատուութեամբ իւր սուրը յետ է դարձնում Հայաստանից: Արդէն մենք տեսաք (վերջ եր. 87), որ խորենացին նման բարեպաշտական գաղափարներով առաջնորդուելով, Յուսիկին ժամանակակից է հանդիսացնում Յուլիանոսին, որպէսզի միեւնոյն ժամանակ եկեղեցու քաջ նահատակ հանդիսացնէ:

Իսկ որ Արշակի թուղթն առ Վաղէս՝ խորենացու երեսնակայուցան արդիւնքն է, դորս մասին խօսել անգամ չ'արժէ: Նամակում յիշուած Արշակի խօսքերը, թէ «Իբրև Տորոս ինչ զմեզ վարկանելով՝ արձակեցաք գունդ հինից յերկիրը Յունաց, խորենացին յորինել է Փաւստոսի պատմութեան վերջայ (Դպր. Գ., գլ. ԺԺ.) ուր պատմուում է, որ Արշակ թագաւորը լսելով, որ Վաղէս կայսրը Ներսիսին պատրուց, «այդ հրաման Վասակայ իբրում զօրավարին զօր ժողովել, զգուրս (սո)լանդակել, եւանել հարկանել եւ աւար առնուլ զկողմանս Գամբուց: Իսկ զօրավարն սպարապետն Վասակ... հարկանէր աւար առնուր զկողմանս Գամբուց մինչև ի քաղաքն ՍՄՆուրացոց...» Իսկ մեր պատմաբանը նոյն իսկ պատգրելուով մէջ այնքան անփոյթ է, որ այստեղ վերջոյնցալ խօսքերը Արշակի բերանն է դնում, առանց նախորդը կամ գոնեայ յետոյ պատմելու, թէ Արշակ երբ, ինչ առթիւ գունդ զրկել Յունաց երկիրը աւերելու:

Իսկ Ներսէս Մեծին պատգամաւորուելու եւ քարտուելու դժուար ինչոր մասին, այսինքն թէ նա իր աստիճանի պատմական կարող է համարուիլ, հետեւեալ անգամ կը խօսինք:

(Շարունակել) Թ. ԴԱՂԱՍԵՍՍ



ՅՈՒՐԵԿ ՀՆՆԵՐԻՆ ԶԻՌՈՒԳՐՈՍ ՍՈՒՇՍՈՐԵՍԸ  
ՎՐՈՒՄԵՐՆԵՐ Ի ԿՆՐԻՆ

(Շարունակել)

20.

Մ Ա Ղ Տ Տ Յ

Իրը ԺՁ - ԺԷ զարէն

ԹՈՒՆՈՒՄ 71, ՈՐԻՆ 7 տոմարոց. էջ չէ նշանակուած: — ՄՅԹՈՒԹԻՒՆ 17.5 սմ. երկ. 13 սմ. լայն. 3 սմ. նստ: — ՆՆԻԹ՝ բամբակեայ թուղթ: — ՎԱՋՄՔ՝ կաշեպատ փայտ. առնել կողմն վրայինը ըկայ: — ԳՈՂՈՒԹԻՒՆՆԸ՝ երկաթեւ. իւրաքանչիւրը՝ 13.6x4 սմ: ՄԻ-